ԻԳ.00.01 - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական միտքը Հին Հնդկաստանում. բրահմայականությունը և բուդդայականությունը: Քաղաքական միտքը հին Չինաստանում /Լաո-ցզի, Կոնֆուցիուս, լեգիզմ/: Հասարակական-քաղաքական միտքը Հունաստանում Ք.ա. 6-5-րդ դդ. /Պյութագորաս, Հերակլիտ/: Դեմոկրիտի քաղաքական հայացքները: Սոփեստները և Սոկրատեսի քաղաքական հայացքները: Կառավարման ձևերը Պլատոնի <<Պետություն>> աշխատությունում: Արիստոտելի քաղաքական հայացքները. կառավարման ձևերի դասակարգումը նրա երկերում: Քաղաքական մտքի ձևավորումը Հին Հռոմում: Ցիցերոնի քաղաքական տեսությունը: Օգոստինոս Երանելու կրոնա-քաղաքական հայացքները: Թ.Աքվինացու քաղաքական հայացքները: Հերետիկոսության քաղաքական գաղափարները միջնադարում: Ռուսական քաղաքական միտքը միջնադարում /9-14-րդ դդ./: Պետության և կառավարման ձևերի հարցերը Ն.Մաքիավելու երկերում: Ն.Մաքիավելու ուսմունքը քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության մասին: Ժ.Բոդենի քաղաքական հայացքները: Մ. Լյութերի կրոնաքաղաքական հայացքները: Թ.Մյունցերի քաղաքական հայացքները: Կալվինի կրոնա-քաղաքական հայացքները: Հ.Գրոթիոսի քաղաքական հայացքները: Թ.Հոբսի քաղաքական հայացքները: Ջ.Լոկի ուսմունքը պետության ու քաղաքացիական հասարակության մասին: Լուսավորության շրջանը քաղաքական մտքի պատմության մեջ: Շառլ Լուի Մոնտեսքիոյի քաղաքական հայացքները: Ժան Ժակ Ռուսսոն հասարակական դաշինքի և ժողովրդական սուվերենիտետի մասին: Ֆրանսուա Վոլտերը քաղաքականության և իշխանության մասին: Էնցիկլոպեդիստների քաղաքական հայացքները /Հոլբախ, Դիդրո, Հելվեցիուս/: Անգլիական լիբերալիզմ. Իերեմիա Բենտամ, Ջոն Ստյուարտ Միլ. ազատության քաղաքական ըմբռնումները: Իմանուիլ Կանտը պետության, քաղաքակա-

նության և բարոյականության մասին: Ֆրիդրիխ Նիցշեի քաղաքական հայացքները. <<գերմարդու>> կոնցեպցիան: Յոհան Գոտֆրիդ Հերդերի քաղաքական հայացքները: Հերբերտ Սպենսերը քաղաքականության և սոցիոլոգիայի մասին: Ամերիկյան քաղաքական ուսմունքները 18-19-րդ դդ. /Թոմաս Ջեֆֆերսոն, Ջեյմս Մեդիսոն, Թոմաս Պեյն/: Արթուր Շոպենհաուերի ռացիոնալիստական հայացքները քաղաքականության և բարոյականության մասին: Էլիտարիստական ուսմունքները 18-19-րդ դդ. /Վոլֆրեդո Պարետո, Գաէտանո Մոսկա, Ռոբերտ Միխելս/: Մարքսիզմի իրավաքաղաքական կոնցեպցիան: Բերտրան Ռասելը իշխանության և կառավարման ձևերի մասին: Մաքս Վեբերի քաղաքագիտական հայեցակարգը: Քաղաքականի հասկացությունն ըստ Կառլ Շմիտտի: Քաղաքական իշխանության ֆենոմենն ըստ Թ. Պարսոնսի:

Ֆրիդրիխ Հեգելի քաղաքականության փիլիսոփայությունը: Լյուդվիգ Գումպլովիչը պետության մասին: Հարոլդ Ջոզեֆ Լասկիի քաղաքական հայացքները: Արևելյան քաղաքական միտքը 19-20-րդ դդ. /Սուն Յաթսեն, Մահաթմա Գանդի/: Ազգային քաղաքագիտական դպրոցները և նրանց հետազոտման ուղղությունները: Նոր ուղղությունները ժամանակակից քաղաքական մտքի պատմության մեջ: Հիմնական հոսանքները և նոր տենդեցները ժամանակակից քաղաքագիտության մեջ: Ռուսական քաղաքական միտքը 19-20-րդ դդ. /Բորիս Նիկոլաևիչ Չիչերին, Նիկոլայ Յակովլեվիչ Դանիլևսկի/: Հայ քաղաքագիտական միտքը 20-րդ դարավերջին: Ռոբերտ Ալան Դալի պոլիարխիայի տեսությունը: Մորիս Դյուվերժեի տեսությունը կուսակցությունների և կուսակցական համակարգերի մասին: Հարոլդ Դուայթ Լասսուելի տեսությունը դեմոկրատիայի մասին: Դեյվիդ Իստոնի քաղաքական համակարգերի տեսությունը: Գաբրիել Ալմոնդի հայացքները քաղաքական և քաղաքացիական մշակույթի մասին:

Հայ քաղաքական միտքը 5-9-րդ դդ. /Մ.Մաշտոց, Փ.Բուզանդ, Ե. Կողբացի/: Մովսես Խորենացու քաղաքական հայացքները: Հայ քաղա-

քական միտքը 10-14-րդ դդ.: Կիլիկիահայ քաղաքական դպրոցը /Ն. Շնորհալի, Ն.Լամբրոնացի, Վ.Ռաբունի/: Հայաստանի ազատագրության Իսրայել Օրու ծրագրերը: Մովսես Բաղրամյանի քաղաքական հայացքները: Շահամիր Շահամիրյանի իրավաքաղաքական հայացքները: Հովսեփ Էմինի քաղաքական հայացքները: Հեղափոխական-դեմոկրատական հոսանքը հայ իրականության մեջ: Կղերա-ֆեոդալական հոսանքը հայ իրականության մեջ: Միքայել Նալբանդյանի քաղաքական հայացքները: Ստեփանոս Նազարյանի և Գրիգոր Արծրունու քաղաքական հայացքները: Հնչակյան կուսակցության քաղաքական գաղափարախոսությունը: Արմենական կուսակցության ծրագրային-քաղաքական դրույթները: Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ծրագրային-քաղաքական դրույթները: Լիբերալ-բուրժուական հոսանքը հայ իրականության մեջ: Հայկական հարցի ծագումը և հայ քաղաքական միտքը /Ն.Ադոնց/: Քաղաքական դիրքորոշումները հայկական բարենորոգումների ծրագրային դրույթներում: Քաղաքական գաղափարախոսական պայքարը և արտաքին կողմնորոշման խնդիրը Հայաստանի առաջին հանրապետությունում: Խորհրդահայ քաղաքական միտքը և նրա ձեռքբերումները: Ազգային գաղափարախոսության հիմնահարցը հայ քաղաքական գիտության մեջ: Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցությունների ծրագրային-գաղափարական դիրքորոշումները: Հայ քաղաքական միտքը և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիները: Քաղաքական հայագիտությունը, նրա առարկան և նպատակները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միրումյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն, ուսումնական ձեռնարկ, Ե., Զանգակ-97 հրատ., 2006:
2. Մանուչարյան Հ., Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Երևանի համալս. հրատ., Ե., 2002:

3. История политической мысли и современность, М., 1998.
4. История политических и правовых учений, ред. В. С. Нерсесянца, М., 2001.
5. История политических и правовых учений, ред. О. Э. Лейста, М., 2002.
6. История политических учений, под ред. О.В. Мартышина, М., 2002.
7. История политической и правовой мысли, ред. В. И.Жукова, М., 1999.
8. Чичерин Б. Н., Политические мыслители, СПб, 1999.